ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» --------- 2017թ. N-------Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի փետրվարի 2-ի հ. 01/82-6/2141-17 գրությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի մասին» N637-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

2. Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի մասին» N 637-Ն որոշման 2-րդ կետի «6,410,852.5 հազար դրամ» բառերը փոխարինել «6,900,852.5 հազար դրամ» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 637-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի փետրվարի 2-ի հ. 01/82-6/2141-17 գրությամբ ծանուցվել է, որ 2017 թվական ՀՀ պետական բյուջեում Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի և Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում վարկային և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների գծով կատարվել է միջծրագրային/միջեռամսյակային վերաբաշխում: Հիմք ընդունելով վերոնշյալ ծանուցումը նախագծում առաջարկվում է Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեում վերոնշյալ ծրագրերի մասով կատարել 490,000.0 հազար դրամի չափով միջծրագրային/միջեռամսյակային վերաբաշխում:
- ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (այսուհետ՝ ՄԱԶԾ) հետ համագործակցության շրջանակներում «Կանաչ կլիմայի» հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհի օգտագործմամբ Երևանի ենթակայության հանրային շենքերում հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում համատեղ ֆինանսավորմամբ իրականացվում է էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: ՄԱԶԾ-ն վերոնշյալ հիմնադրամի դրամաշնորհային միջոցներով ֆինանսավորում է ընդհանուր հիմնանորոգման նախագծային արժեքի 15%-ը: Պիլոտային ծրագրում ընդգրկվել են Երևանի Էրեբունի վարչական շրջանի «Թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի «Երևանի հ.160 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքները, որոնց նախագծային արժեքի՝ որն իր մեջ կներառի նաև էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները 15% կֆինանսավորվի ՄԱԶԾ-ի կողմից: Համագործակցության շրջանակում հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացը կիրականացվի ՄԱԶԾ ընթացակարգով՝ ՄԱԶԾ-ի կողմից: Այս ծրագրի առավելություններից է նաև այն, որ ՄԱԶԾ-ն ազատված է ԱԱՀ-ի վճարումից, ինչը կբերի ընդհանուր ծախսերի տնտեսման: Հաշվի առնելով նշված հանգամանքը ծրագրի իրականացման նպատակով նախագծով առաջարկվում է «Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում» և «Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում» ծրագրերում կատարել համապատասխանաբար 325,000.0 հազար դրամի և 95,000.0 հազար դրամի հոդվածային վերաբաշխում:
- Հիմք ընդունելով նշված փոփոխությունները և վերաբաշխումները՝ բյուջեի վարչական և ֆոնդային մասերը հավասարակշռելու նպատակով նախագծով առաջարկվում է վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումն ավելացնել 639,132.6 հազար դրամով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 637-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 637-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 637-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2017 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2017 թվականի _____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**		**-**	**-**	**639,132.6**
	այդ թվում՝				
1100	**1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**	**7100**	**-**	**-**	**-**
	այդ թվում՝				
1120	**1.2 Գույքային հարկեր այլ գույքից**	**7136**	**10,000.0**	**10,000.0**	**-**
	այդ թվում՝				
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		10,000.0	10,000.0	-
1130	**1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**	**7145**	**(10,000.0)**	**(10,000.0)**	**-**
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրքեր	71452	**(10,000.0)**	**(10,000.0)**	**-**
	այդ թվում՝				
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		(10,000.0)	(10,000.0)	-
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**	**7400**	**-**	**-**	**639,132.6**
	այդ թվում՝				
1390	**3.9 Այլ եկամուտներ**	**7451**	**-**	**-**	**639,132.6**
	այդ թվում՝				
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		-	-	639,132.6

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2017 թվականի _____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**-**	**-**	**639,132.6**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**(490,000.0)**	**(1,549,132.6)**	**1,059,132.6**
				այդ թվում՝			
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***	**(490,000.0)**	**(1,549,132.6)**	**1,059,132.6**
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	(490,000.0)	(1,549,132.6)	1,059,132.6
2900	**09**	**0**	**0**	**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**	**-**	**420,000.0**	**(420,000.0)**
				այդ թվում՝			
2950	**09**	**5**	**0**	***Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն***	**-**	**325,000.0**	**(325,000.0)**
				որից՝			
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	-	325,000.0	(325,000.0)
2960	**09**	**6**	**0**	***Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ***	**-**	**95,000.0**	**(95,000.0)**
				որից՝			
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	95,000.0	(95,000.0)
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**	**490,000.0**	**1,129,132.6**	**-**
				այդ թվում՝			
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***	**490,000.0**	**1,129,132.6**	**-**
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	490,000.0	1,129,132.6	-

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2017 թվականի _____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		-	-	**639,132.6**
	այդ թվում՝				
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ[2]	x	**(639,132.6)**	-	-
	այդ թվում՝				
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	**(1,059,132.6)**	**(1,059,132.6)**	-
	այդ թվում՝				
4250	*ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)*	x	(1,059,132.6)	(1,059,132.6)	-
	որից՝				
4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	(1,059,132.6)	(1,059,132.6)	-
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	x	**420,000.0**	**420,000.0**	-
	այդ թվում՝				
4530	*ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ*	x	420,000.0	420,000.0	-
	որից՝				
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	420,000.0	420,000.0	-
4700	*1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*	x	-	**639,132.6**	-
	այդ թվում՝				
4760	*ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*	x	(490,000.0)	(490,000.0)	-
	որից՝				
4761	-Այլ ծախսեր	4861	(490,000.0)	(490,000.0)	-
4770	*ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ*	x	**490,000.0**	**1,129,132.6**	-
	որից՝				
4771	-Պահուստային միջոցներ	4891	490,000.0	490,000.0	-
4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	-	639,132.6	-
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	x	**639,132.6**	-	**639,132.6**
	այդ թվում՝				
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	**639,132.6**	-	**639,132.6**
	այդ թվում՝				
5110	*ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*	x	639,132.6	-	639,132.6
	որից՝				
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	639,132.6	-	639,132.6

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2017 թվականի _____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		-	-	639,132.6
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		(490,000.0)	(1,549,132.6)	1,059,132.6
				այդ թվում՝				
2450	04	5	0	*Տրանսպորտ*		(490,000.0)	(1,549,132.6)	1,059,132.6
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		(490,000.0)	(1,549,132.6)	1,059,132.6
				այդ թվում՝				
				1. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում		-	*(1,059,132.6)*	*1,059,132.6*
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	(1,059,132.6)	(1,059,132.6)	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	1,059,132.6	-	1,059,132.6
				15. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված յիազորություններ)		*(490,000.0)*	*(490,000.0)*	-
				-Այլ ծախսեր	4861	(490,000.0)	(490,000.0)	-
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ		-	420,000.0	(420,000.0)
				այդ թվում՝				
2950	09	5	0	*Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն*		-	325,000.0	(325,000.0)
				որից՝				
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		-	325,000.0	(325,000.0)
				այդ թվում՝				
				2. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում		-	*325,000.0*	*(325,000.0)*
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	325,000.0	325,000.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(325,000.0)	-	(325,000.0)
2960	09	6	0	*Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ*		-	95,000.0	(95,000.0)
				որից՝				
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		-	95,000.0	(95,000.0)
				այդ թվում՝				
				1. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում		-	*95,000.0*	*(95,000.0)*
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	95,000.0	95,000.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(95,000.0)	-	(95,000.0)
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ		490,000.0	1,129,132.6	-
				այդ թվում՝				
3110	11	1	0	*ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ*		490,000.0	1,129,132.6	-
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		490,000.0	1,129,132.6	-
				այդ թվում՝				
				-Պահուստային միջոցներ	4891	490,000.0	490,000.0	-
				-Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե	x	-	639,132.6	-

Հավելված N 5
Երևան քաղաքի ավագանու
2017 թվականի _____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 637-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**-**	**-**	**639,132.6**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**(490,000.0)**	**(1,549,132.6)**	**1,059,132.6**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**(490,000.0)**	**(1,549,132.6)**	**1,059,132.6**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		(490,000.0)	(1,549,132.6)	1,059,132.6
				այդ թվում՝				
				1. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում		***-***	***(1,059,132.6)***	***1,059,132.6***
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	(1,059,132.6)	(1,059,132.6)	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	1,059,132.6	-	1,059,132.6
				15. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)		***(490,000.0)***	***(490,000.0)***	***-***
				-Այլ ծախսեր	4861	(490,000.0)	(490,000.0)	-
2900	**09**	**0**	**0**	**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**		**-**	**420,000.0**	**(420,000.0)**
				այդ թվում՝				
2950	**09**	**5**	**0**	***Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն***		**-**	**325,000.0**	**(325,000.0)**
				որից՝				
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		-	325,000.0	(325,000.0)
				այդ թվում՝				
				2. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում		***-***	***325,000.0***	***(325,000.0)***
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	325,000.0	325,000.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(325,000.0)	-	(325,000.0)
2960	**09**	**6**	**0**	***Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ***		**-**	**95,000.0**	**(95,000.0)**
				որից՝				
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		-	95,000.0	(95,000.0)
				այդ թվում՝				
				1. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում		***-***	***95,000.0***	***(95,000.0)***
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	95,000.0	95,000.0	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(95,000.0)	-	(95,000.0)
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**		**490,000.0**	**1,129,132.6**	**-**
				այդ թվում՝				
3110	**11**	**1**	**0**	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**490,000.0**	**1,129,132.6**	**-**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		490,000.0	1,129,132.6	-
				այդ թվում՝				
				–Պահուստային միջոցներ	4891	490,000.0	490,000.0	-
				–Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե	x	-	639,132.6	-